Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԻՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19. Մարտի. 2019թ. ք. Արթիկ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի Արթիկի բաժանմունքի հարկադիր կատարող, արդարադատության լեյտենանտ Դավիթ Սահակյանս քննության առնելով 21.08.2018թ–ին վերսկսված թիվ 08/01-004011908/18 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 21.08.2018թ–ին տրված թիվ ՇԴ3/1560/02/17 կատարողական թերթի հիման վրա անհրաժեշտ է պարտապան՝ Գևորգ Վանիկի Հոլիկյանից հօգուտ Բանկի բռնագանձել 745.730,30 (յոթ հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր երեսուն դրամ և երեսուն լումա) ՀՀ դրամ, որից վարկի գումար՝ 686.000 ՀՀ դրամ, վարկի դիմաց հաշվարկված տոկոս 41.548,50 ՀՀ դրամ, ժամկետանց տոկոսի դիմաց հաշվարկված տույժ՝ 1.809,50 ՀՀ դրամ, ժամկետանց գումարի դիմաց հաշվարկված տույժ՝ 1.966,30 ՀՀ դրամ, սպասարկման վճար՝ 14.406 ՀՀ դրամ, ինչպես նաև բռնագանձել 14.914,60 (տասնչորս հազար ինը հարյուր տասնչորս դրամ և վաթսուն լումա) ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

02.11.2017 թվականից մինչև պարտավորությունների փաստացի կատարման օրը, ժամկետանց վարկի՝ 44.269,60 ՀՀ դրամի և հաշվարկված տոկոսների՝ 41.548,50 ՀՀ դրամ գումարի նկատմամբ (նշված գումարները գոյացել է 01.11.2017 թվականը ներառյալ), յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվեգրել 0,09%-ի չափով տույժ, և այն Գևորգ Վանիկի Հոլիկյանից բռնագանձել հօգուտ Բանկի:

Համաձայն շարադրվածի և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի համաձայն, պարտապան այն Գևորգ Վանիկի Հոլիկյանից անհրաժեշտ է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը կազմող գումար՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախսերի գումար:

Կատարողական թերթի պահանջի կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է պարտապան Գևորգ Վանիկի Հոլիկյանի կողմից «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունում գրավադրված՝ ոսկյա իրերի գրավի ստուգման և հանձնման-ընդունման թիվ ՈՎ_063_17_00115 ակտում նշված 12 / տասներկու / միավոր ոսկյա զարդերի նկատմամբ նշանակել ապրանքագիտական փորձաքննություն՝ փորձաքննության արդյունքում տրված եզրակացության հիման վրա վերջիններս հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու նպատակով:

14.12.2018թ. հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի Արթիկի բաժանմունք է մուտքագրվել նշանակված փորձաքննության արդյունքներով Ա/Ձ Օնիկ Ֆրանկյանի գնահատման հաշվետվությունը, ինչի կապակցությամբ անհրաժեշտ է գնահատված ոսկյա զարդերը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1 - 35.4 հոդվածների պահանջով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1/ Պարտապան՝ Գևորգ Վանիկի Հոլիկյանի կողմից «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունում գրավադրված՝ ոսկյա իրերի գրավի ստուգման և հանձնման-ընդունման թիվ ՈՎ_063_17_00115 ակտում նշված 12 / տասներկու / միավոր ոսկյա իրերը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի հետևյալ գներով՝

Հ/Հ	Ոսկեղենի անվանումը	քանակը	Քաշը և հարգը / համաձայն ապրանքագիտական փորձաքննության /	Գնահատման գինը	Մեկնարկային գինը
1	Ոսկյա մատանի ամուսնական	1 հատ	5,0 գրամ, 900 հարգի	85.000 դրամ	63.750 դրամ

2	Ոսկյա մատանի ամուսնական	1 հատ	4,4 գրամ, 900 հարգի	74.800 դրամ	56.100 դրամ
3	Ոսկյա մատանի	1 հատ	2,2 գրամ, 583 հարգի	24.200 դրամ	18.150 դրամ
4	Ոսկյա մատանի	1 հատ	3,0 գրամ, 583 հարգի	33.000 դրամ	24.750 դրամ
5	Ոսկյա մատանի գնդիկներով	1 հատ	7,0 գրամ, 500 հարգի	66.500 դրամ	49.500 դրամ
6	Ոսկյա մատանի	1 հատ	2,9 գրամ, 583 հարգի	31.900 դրամ	23.925 դրամ
7	Ոսկյա մատանի	1 հատ	1,4 գրամ, 500 հարգի	13.300 դրամ	9.975 դրամ
8	Ոսկյա ականջող	1 զույգ	2,5 գրամ, 583 հարգի	27.500 դրամ	20.625 դրամ
9	Ոսկյա կախազարդ	1 հատ	1,4 գրամ, 500 հարգի	13.300 դրամ	9.975 դրամ
10	Ոսկյա թևնոց	1 հատ	9,5 գրամ, 560 հարգի	99.700 դրամ	74.775 դրամ
11	Ոսկյա շղթա	1 հատ	4,0 գրամ, 583 հարգի	44.000 դրամ	33.000 դրամ

Հարկադիր էլեկտրոնային աճուրդը իրականացնել էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարումն ապահովող ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ www.achurd.harkadir.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ ,,29,, ապրիլի 2019թ-ին:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ Ո Ւ Ն

Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջեցվում: Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ, 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը / գույքը / չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը / պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի / լոտի / հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

2/ Որոշման օրինակն ուղարկել կողմերին:

3/ Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ այն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

4/ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԼԵՅՏԵՆԱՆՏ՝ Դ. Մ. ՍԱՀԱԿՅԱՆ